ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

12 փետրվարի 2014 թվականի N 12-Ա

ք. Հրազդան

Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 111-րդ հոդվածի 2-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետը՝ **կարգադրում եմ.**

1. ***Արամայիս Հայրապետյանին*** 2014 թվականի փետրվարի 12-ից ազատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Ձրաբերի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2009 թվականի փետրվարի 12-ին կնքված N 1 աշխատանքային պայմանագիրը:

Հիմք՝ ***2014 թվականի հունվարի 31-ի N 01/21.2/239-14 գրավոր ծանուցումը***:

2. Մինչև ընտրության արդյունքում նոր գործադիր տնօրենի նշանակվելը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Ձրաբերի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնակատար նշանակել ***Արամայիս Հայրապետյանին***:

3. Առաջարկել դպրոցի կառավարման խորհրդին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Ձրաբերի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի ընտրություն:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ